ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ ՄԻ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ուշ անտիկ դարաշրջանի նշանավոր գիտնական (պատմիչ, աշխարհագրագետ, աստղագետ, մաթեմատիկոս...) Կլավդիոս Պտղոմեոսը (Claudius Ptolemaeus, ծնվ. 83թ. հետո.- մոտ. 161թ. հետո) իր թողած գիտական ժառանգությամբ մեծ դեր է խաղացել հասարակության զարգացման և առաջընթացի ասպարեզներում: Նրա աշխատություններից առանձնապես ծանրակշիռ նշանակություն ունեն «Աշխարհագրության ձեռնարկը» (Γεογραφική υφήγησις), «Աստղագիտության մեծ մաթեմատիկական կառույցը (Megale կամ Megiste suntaxis), «Քառագիրքը» (Τετραβίβλος συνταξις կամ լատիներեն Quadripartitum), «Պտուղը» (Καρπος), «Հարյուր խոսք» (Centiloquium), «Տիեզերքի կառույցը» (Planisphaerium) և մյուս ուսումնասիրությունները: Մեզ հետաքրքրողը վերոհիշյալից՝ նրա առաջին աշխատությունն է (Աշխարհագրության ձեռնարկը), որը կազմված է ութ գրքերից: Տարածքային առումով այն ընդգրկում է ներկայիս Կանարյան կղզիներից մինչև Չինաստանն ընկած համարյա բոլոր տարածքների աշխարհագրական նկարագիրը՝ հիմնված լինելով իրեն նախորդած մյուս անտիկ պատմիչ-աշխարհագրագետների տեսությունների վրա (Հիպպարքոս, Էրատոսթենես, Մարինոս Տյուրոսացի...): Պտղոմեոսից նաև մեզ է հասել երկրագնդի 26 տարբեր տարածքներին վերաբերող քարտեզներ, ինչպես նաև մեկ ամբողջական քարտեզ, ուր պատկերված է այդ ժամանակ հայտնի ողջ աշխարհը: Վերջապես նա առաջիններից մեկն էր, որ փորձեց հաշվել երկրի շրջագիծը:

Սակայն մեր նպատակն ու խնդիրները, սույն հոդվածի առնչությամբ, լիովին այլ են: Քաջ հայտնի է շատերին, որ Պտղոմեոսն իր «Աշխարհագրությունում», մեծ տեղ և ուշադրություն է հատկացնում նաև հին Հայաստանի պատմա-աշխարհագրական հարցերի քննարկումներին: Դրանք հիմնականում շարադրված են նրա աշխատության V գրքում, բայց դրանք որոշ չափով լրացվում են նաև VI և VIII գրքերում հաղորդվող վկայություններով: Դրանք բավականին բազմաբնույթ և տարատեսակ են, որոնք լույս են սփռում հատկապես Արշակունյաց Հայաստանի (որովհետև հեղինակն ապրել և

ստեղծագործել է Անտոնինոսների դինաստիայի (96-192թթ.) կայսր Անտոնինոս Պիուսի՝ 138-161թթ., օրոք) պատմության մի շարք կնճռոտ խնդիրների հանգուցալուծմանը: Մեր ուշադրությունն է գրավել նրա մի վկայությունը, որը ևս V գրքից է, բայց վերաբերում է Փոքր Հայքին (այն Պտղոմեոսն ընդգրկել է Ասիայի I քարտեզում): Հեղինակն այստեղ նախ համառոտակի տալիս է հայկական այս տարածքի վարչական բաժանման համակարգը, որոնք են Օրբալիսենե, Այտուլանե (Այտուղան), Այրիտիկ(ե), Օրսեն(ե), Օրբիսենե (դասավորվածությունը տրված է հյուսիսից-հարավ): Ապա դրան հետևում է Եփրատի մոտ տեղակայված բնակավայրերի թվարկումը, որին այնուհետև հետևում է երկրի խորքում (լեռնային շրջաններում) տեղակայված բնակավայրերի թվարկումը: Վերջինիս 4-րդ պարագրաֆում հեղինակը վկայում է. «..Անալիբրա՝ 70° 20′, 41° 20′, Պիսինգարա՝ 69° 30′, 40° 55′, Գոդասա՝ 69°, 40° 45′, Էվդոյքսատա՝ 69° 15′, 40° 25′, Կարապե՝ 70° 20′, 40° 50′, Մասորա՝ 70° 30′, 40° 40′, *Օրոմանդրոս*՝ (ընդգծումը մերն է - Հ.Հ.) 39° 40′, 40° 30′...»:[1] Այս բնակավայրերի թվարկումը նա շարունակում է, որոնք բոլորն էլ առաջին մասում ունեն 70°-ից մինչև 67°, իսկ երկրորդում՝ 40-39° տեղադրություն, այսինքն գտնվում են մոտավորապես նույն աստիճանի ներքո, ինչ ունեին վերոհիշյալները: Պտղոմեոսի այս վկայության մեջ, մեր ուշադրությունը հատկապես գրավեց Օրոմանդրոսը, քանզի, երբ ընթերցում ենք Ստրաբոնի «Աշխարհագրությունը», ապա հանգում ենք այլ ենթադրությունների: Իսկ վերջինս Մեծ Հայքի պետականության հիմնման և հայկական հողերի վերամիավորման կապակցությամբ վկայում է. «Պատմում են, որ Արմենիան եղել է առաջ փոքր և մեծացել է Արտաքսիասի (Արտաշես Ա -Հ.Հ.) և Զարիադրիսի (Զարեհ – Հ.Հ.) ծեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի (Անտիոքոս Գ Մեծ, թագավորել է 223-187թթ. – Հ.Հ.) զորավարներն էին, և նրա անկումից հետո թագավորեցին՝ մեկը Օռփքի, Ակիսինեյի, *Օդոմանտիսի* (ընդգծումը մերն է - Հ.Հ.) և մի քանի այլ գավառների վրա, իսկ մյուսը՝ Արտաշատի շուրջը գտնվող երկրի վրա: Սրանք ընդարձակեցին իրենց երկրների սահմանները և գրավեցին շրջակա ժողովուրդներից հետևյալ շրջանները. մեդիացիներից՝ Կասպիանեն, Փավլհտիսը և Բասորոպեդեան, իբերներից՝ Պարիադրեսի լեռնալանջերը, Խորզենեն և Գոգարենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս կողմում, Խալյուբներից և մոսսինոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որոնք սահմանակից են Փ, Հայքին, կամ նրա մասերն են, կատաոնկներից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի կողմերը գտնվող երկիրը և ասորիներից՝ Տամորիտիսը...»:[2] Այժմ մեզ անհրաժեշտ է բացահայտել, թե կա արդյոք որևէ կապ, հարաբերություն պտղոմեոսյան՝ Օրոմանդրոսի և ստրաբոնյան՝ Օդոմանտիսի միջև:

Ստրաբոնի իր հայերեն թարգմանության մեջ՝ ակադ. Հր. Աճառյանը իր «Հատուկ անունների ցանկ» բաժնում Օդոմանտիս (Odomantis) տեղանվան ծանոթագրության դիմաց գրում է. «..ուղղել Որոմանտիդոս՝ ըստ Muller, քանի որ Պտղոմեոսի մոտ ունենք Oromandus, գավառ հին Հայաստանի, չշփոթել Ոդոմանտների հետ, որոնք թրակիական մի ժողովուրդ են»:[3] Մենք լիովին կիսում ենք նշանավոր գիտնականի այս տեսակետը, որը, սակայն պետք է ապացուցել: Մենք այստեղ չունենք և ոչ մի կռվան, որպեսզի հիմնավորենք, որ Օդոմանտիս-Որոմանդրոս-Որոմանտիդոսը իսկապես գտնվել է Փ. Հայքում, և նվաճվել է նրանից՝ անհայտ պատերազմի արդյունքում: Հարց է ծագում, իսկ ինչու: Փ. Հայքի քաղաքական զարգացման ընթացքից մեզ հայտնի են միայն առանձին բեկորներ կամ նշույլներ: Փ. Հայքն իր ողջ պատմական զարգացման ընթացքում մնաց մեկուսացված Մ. Հայքից, որն էլ երևի հանդիսացավ նրա «դժբախտությունների ու տառապանքների» հիմնական պատճառը: Պտղոմեոսի օրոք Փ. Հայքն արդեն Հռոմեական կայսրության կազմում էր (այն դեռ մ.թ.ա. 63թ. Պոմպեոսը միացրել էր Հռոմեական հանրապետությանը), երբ կործանվեց Պոնտական պետությունը: Իսկ մինչ այս ամենը, դեռ մ.թ.ա. 111թ. Փ. Հայքը իր պետությանը՝ Պոնտոսի թագավորությանն էր բռնակցել Միհրդատ Զ Եվպատորը (մ.թ.ա. 120-63թթ.): Իսկ ինչ վերաբերում է մինչև մ.թ.ա. 111թ. տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ, ապա աղբյուրների վկայությունները Փ. Հայքի կապակցությամբ, ապա ավելի սուղ և կցկտուր են: Բայց, եթե Արտաշեսն ու Զարեհը ցանկանային տարածքներ գրավել նրանից, ապա ստիպված կլինեին պատերազմել Հռոմի դեմ, քանզի մ.թ.ա. IIդ. սկսած (ավելի ստույգ 190թ. Մագնեսիայի ճակատամարտից) հանրապետությունը վարում էր Փ. Ասիայում և ընդհանրապես Արևելքում հաստատվելու քաղաքականություն: Այս պատճառով էլ իզուր չէ, որ Ստրաբոնը կատարում է վերապահում, երբ գրում . «..որոնք սահմանակից են Փ. Հայքին, կամ նրա մասերն են..»: Այս ամենը կարող է նշանակել միայն մեկ հանգամանք. Օդոմանտիս-Որոմանտիդոսը պետք է փնտրել Ծոփքում, իսկ ծայրահեղ դեպքում՝ նրան հարակից (հարևան) երկրամասերում: Եթե առաջնորդվենք «Աշխարհացույց»-յան Մ. Հայքի վարչատարածքային բաժանումների քարտեզով, ապա Ծոփքին սահմանակից էին Բարձր Հայքը, Տուրուբերանը և Աղձնիքը: Մ. Հայքի, որի անբաժան մասն էր նաև Ծոփքը (սկսած մ.թ.ա 94թ, երբ Տիգրան Բ Մեծը գահընկեց արեց այստեղի վերջին արքա Արտանեսին), արևմտյան սահմանը մշտապես անցել է Եփրատով, որի վերաբերյալ միաբերան վկայում են բոլոր մատենագիրները (Խորենացի, Փավստոս, Ամմիանոս...):

Մեր համեստ ենթադրությամբ այս գորդյան հանգույցի բացահայտման

լավագույն դեղամիջոց (բալասան), երևի կարող է հանդիսանալ միայն պատմական լեզվաբանությունը: Քաջ հայտնի է, որ հին հունարենում՝ oros (oros) կամ համաձայն հոնիական բարբառի՝ ουρος նշանակում է լեռ (այստեղից՝ օրոգրաֆիա- լեռնագրություն), իսկ մանդիտիդոսը՝ կրկին հին հունարենից μανδρα (mandra) բառի փոխակերպումն է, և այն նշանակում է փարախ, նախրատեղ: Հավանաբար, խոսքն այստեղ վերաբերում է Հայկական Տավրոսին, կամ նրա մաս կազմող լեռնաշղթաներից մեկին (Խութի, Սասունի, Բաղեշի), որոնք, ինչպես և օրինակ Ծոփքով հոսող Արածանիի (կամ այլ գետի) հովիտն ու նրան հարող լեռնալանջերը, ըստ ամենայնի հարուստ են եղել կանաչ տարածքներով, այսինքն՝ հանդիսացել են արոտատեղի: Mandra-յից է ծագում նաև հին հունական մանդրագորասը (μανδραγορας), որին հին հռոմեացիները, ևս անվանել են նույն կերպ:[4] Այն հայերեն թարգմանվում է, որպես մարդախոտ, որը բազմամյա բույս է, ունի նաև բուժիչ հատկություններ:[5] Այդ բույսից է պատրաստվում նաև Atropa belladonna դեղաբույսը, որի վերաբերյալ նույնիսկ հիշատակում են անտիկ նշանավոր պատմիչները՝ Քսենոփոնը, Պլուտարքոսը...Այսպիսով, պետք է ենթադրել, որ այս տեղանքի անվանակոչության (օնոմաստիկայի) խնդրում, հիմնական և առաջնակարգ դեր ունեցել է նրա բնակլիմայական պայմանների առկայությունը: Հասարակության պատմության ընթացքում այդպես անվանվել են անթիվ տարածքներ, բնակավայրեր...

Վերոհիշյալ բոլոր հանգամանքներից զատ, չպետք է զանց առնել մեկ կարևոր հանգամանք ևս, որքան էլ այն համարվի երկրորդական: Հին հունարենում իրար խիստ նման են փոքրատառեր δ և ρ, և երբեք ոչ մեկը չի կարող պնդել հակառակը, որ արտագրելիս՝ գրագիրները կարող էին մեկը շփոթել մյուսի հետ: Երբեք հնարավոր չէ, որ իրար հետ շփոթվեն կամ խառնվեն այս երկու նույն տառերի մեծատառերը (Δ և Ρ), նույն կերպ, ինչպես անհնարին է շփոթել իրար հետ բազմաթիվ այլ փոքրատառեր (μ, ν, φ, λ, ε և այլն): Ահա այս ճանապարհով այդ տեղանվան առաջին վանկում տեղի է ունեցել փոփոխություն, Օդո-ն վերածվել է Օրոյի:

Այսպիսով, ստացվում է, որ երկու պատմիչներն էլ (Ստրաբոնը և Պտղոմեոսը), իրարից անկախ խոսում են միևնույն տեղանքի մասին: Ստրաբոնը չի սխալվում, երբ այն տեղադրում է Φ. Հայքից դուրս, բայց սխալվում է անվանման խնդրում: Կլավդիոս Պտղոմեոսի մոտ ամեն ինչ հակառակն է. նա սխալվում է տեղադրության խնդրում, բայց իրավացի է անվանակոչության ասպարեզում: Փաստորեն դուրս է գալիս, որ միայն նրանց համադրության ճանապարհով հնարավոր է պարզել Օդոմանտիս-Օրոմանդրոսի տեղը: Այն, ամենայն հավանականությամբ, գտնվել է Ծոփքում, և կամ

նրան հարակից (սահմանամերձ) վարչա-տարածքային շրջաններից մեկում, քանզի, երբ Ծոփքը թագավորություն էր (մ.թ.ա. 189-94թթ.) ապա այն զբաղեցնում էր ավելի մեծ տարածք, քան հետագայում, երբ վերածվեց նահանգի:[6]

Վերադառնալով Կլավդիոս Պտղոմեոսին նշենք, որ նա իր «Աշխարհագրության ձեռնարկ» աշխատությամբ խորը և անջնջելի հետք թողեց այս գիտության զարգացման վրա, և իզուր չէ, որ մեր օրերում աշխարհագրության զարգացումը կապում են նրա անվան հետ: Սրանք անհիմն խոսքեր չեն, քանզի միջնադարյան խավարից հետո, երբ Վերածննդի դարաշրջանում աշխարհագրությունը վերածնվեց, ապա այն մեծապես հիմնվում էր Պտղոմեոսյան ժառանգության վրա: Այդ ժառանգությունը մեծապես կարևոր է նաև մեր պատմության մութ ծալքերի պարզաբանման համար, բայց երբեմն դրանք անհրաժեշտ է համադրել և քննարկել այլ մատենագիրների վկայությունների կողքին, ինչպես կոնկրետ այս դեպքում էր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1]Քանի որ Կլավդիոս Պտղոմեոսը մեծ ազդեցություն և խորը հետք է թողել համաշխարհային գիտության մի շարք բնագավառներում, ուստի նրա կյանքն ու հայացքները ուսումնասիրվել են մի շարք գիտնականների կողմից: Այս կապակցությամբ տես В.А. Бронштэн, Клавдий Птолемей М. 1988, Л.А. Браун, История географических карт, М. 2006, էջ 93-124, Л. Багров, История картографии. М. 2004, էջ 78-91, Newton, R.R, The crime of Claudius Ptolemy, Baltimore, L, J. Hopkins Univ. press, 1978

[2] Տես Claudii Ptolomaei Geography, ed. C. Muller, Parisitis, 1901, V, 7, 1, նաև Թ.Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Եր. 1968, էջ 106, Բ.Հ. Հարությունյան, Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, Եր. 2004, էջ 34 (Հայաստանն ըստ Կլավդիոտ Պտղոմեոսի «Աշխարհագրության» (II դար) քարտեզը):

[3] Claudii Ptolomaei, V, 7,4

[4] The Geography of Strabo, London 1960, XI, 14,5

[5] Ուտար աղբյուրներ հայերի մասին, Հունական աղբյուրներ N1, Ստրաբոն, քաղ. և թարգ. Հ. Աճառյան, Յեր. 1940, էջ 116-117

[6] Տես И.Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. Ii М. 1958, էջ 1051, նաև նույնի՝ Латинско-русский словарь, М. 1976, էջ 615

[7] Տես ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. III խմբ. Գ.Բ. Ջահուկյանի, Եր. 1974, էջ 477, 491

[8] Այս կապակցությամբ տես Բ.Հ. Հարությունյանի քարտեզները: Բ.Հ. Հարությունյան, Հայաստանի պատմության ատլաս, էջ 22-24, 42-43, նաև նույնի՝ Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), Եր. 2001, էջ 114-115 նաև Հ.ժ. Հարությունյան, Ծոփքը և Ծոփքի թագավորությունը ըստ Ստրաբոնի «Աշխարհագրության»,ԲԵՀ, 1996 N 1, էջ 71-73